«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ

Վերապատրաստող կազմակերպություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում

Առարկա ՝ Նախնական զինվորական պատրաստություն

Դպրոց՝ Գյումրու Ակադեմիական վարժարան

Ուսուցիչ ՝ Կարեն Գյուրջյան

Ղեկավար՝ Ալեքսանյան Կարինե

Գյումրի 2023թ.

Բովանդակություն

Ներածություն---------- 1
Գլուխ 1. Ռազմահայրենասիրական դաստիարակության բովանդակությունը և հիմնախնդիրները դպրոցում- ----------5
Գլուխ 2. Սովորողների ռազմահայրենասիրական և հայրենասիրական դաստիարակության իրականացման ուղիները----------12
Եզրակացություն----------18
Գրականության ցանկ---------- 19

Ներածություն

«Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) առարկայի նոր ուսումնական ծրագրում կատարված որակական փոփոխությունները պայմանավորված են ինչպես ռազմագիտության ոլորտում վերջին տասնամյակում տեղի ունեցած փոփոխություններով և իրավիճակային զարգացումներով, այնպես էլ ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման ձևով՝ օգտագործելով ուսուցման պարուրաձև և վեկտորային մոտեցումները, շարժվելով անհատական պատրաստվածությունից խմբային (ջոկային) պատրաստվածության: Այստեղ առաջնային է ուսուցումը գործնական հիմքերի վրա դնելը, մարտական իրադրությունում և արտակարգ այլ իրավիճակներում անհրաժեշտ հմտությունների և կարողությունների ձեռքբերումը, աստիճանաբար հիմքային որակների ձևավորումից գործնական վարժանքներում դրանց կիրառումը: Կարևորվում է նաև միջառարկայական կապերի զարգացումը և ուսուցողական նյութերի պարզեցումը, ոչ պրոֆիլային թեմաներից ազատումը և արդիական ու կարևոր թեմաների ներմուծումը, ավելի արդյունավետ մեթոդական մոտեցումների, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառումը: Առաջադրվող ուսումնական ծրագիրը երկու հիմնական ուղղվածություն ունի՝ մասնագիտական հիմունքների ուսուցում և դաստիարակություն: Այն մեծապես համապատասխանում է մանկավարժական գիտության հիմնարար սկզբունքներին՝ օբյեկտիվություն, ուսուցման համակարգվածություն և հաջորդականություն, դիտողականություն և մատչելիություն, գործնական ուղղվածություն, գիտելիքների յուրացում հմտությունների և կարողությունների ձևավորմամբ, սովորողների ակտիվություն (ներքին շարժառիթների ձևավորում և ուսուցման խթանում), առարկայի և ոլորտի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում և մասնագիտական կողմնորոշում: Ծրագրի մշակման ժամանակ կարևորվել է այն հանգամանքը, որ մարտական իրադրությունը, արտակարգ իրավիճակները հոգեբանական խոր սթրես են առաջացնում, որի ժամանակ մեծապես արգելակվում են մարդու զգայական, մտածական մեխանիզմները և գործում են միայն մարդու հմտություններն ու կարողությունները: Հմտություններ ասելով հասկանում ենք վարժանքների շնորհիվ մինչև ավտոմատիզմի հասցված մարդու գործնական կարողությունները, որոնք նա

իրականացնում է ինքնաբերաբար՝ ուշադրությունը կենտրոնացնելով միայն արագ փոփոխվող իրավիճակի վրա և արձագանքելով դրան։ Մասնավորապես, հրաձգության ժամանակ զինվորը չպետք է մտածի շնչառությունը կանոնավորելու, զենքը ճիշտ պահելու, աչքի ֆոկուսը կանոնավորելու, ձգանը քաշելու տեխնիկայի վրա՝ դրանք իրականացնելով մեխանիկորեն, իսկ ուշադրությունը կենտրոնացնում է միայն թիրախի ընտրության վրա։ Նույնը՝ հառակորդի կրակոցին, արկի պայթյունին արձագանքելու կամ զենքի կիրառման անվտանգության կանոնները պահպանելու, պատահական կրակոցներից խուսափելու հետ կապված։ Հմտորեն մշակված շարժումները՝ արագ կամ քողարկված տեղաշարժը արդյունավետ են դարձնում զինվորի գործողությունները և շատ դեպքերում ապահովում նրա անվտանգությունը։ Ֆիզիկական կարողությունների (հավասարակշռության պահպանում, շարժումների կոորդինացիա, ճկնություն, ճարպկություն, ուժ, դիմացկունութուն) և հմտությունների ձևավորումը սովորաբար իրականացվում է ֆիզիկական կուլտուրա առարկայի դասընթացում, իսկ ՆԶՊ-ի դասընթացում իրականացվում են զինվորի համար նախատեսված վարժաձևերի կատարման կարողություններն ու հմտությունները՝ 8-րդ, 9- րդ և 10-րդ դասարաններում

Գլուխ առաջին: Ռազմահայրենասիրական դաստիարակության բովանդակությունը և հիմնախնդիրները ավագ դպրոցում

Ազգային արժեհամակարգի կրող երիտասարդ սերնդի ձևավորման գործում կարևոր դեր է խաղում ռազմահայրենասիրական դաստիարակությունը, որով սերմանվում է հայրենիքի հանդեպ սեր և նվիրվածություն, երկրի առաջընթացին սեփական ջանքերով նպաստելու ձգտում: Ժամանակակից հասարակության մեջ երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունն առանձնակի կարևորություն է ձեռք բերում մի քանի պատճառներով. բարձրանում է նոր սերնդի տեղեկացվածության մակարդակը, ժողովրդավարացման գործընթացները որոշակի դժվարություններ են ստեղծում՝ ըմբռնելու հայրենասիրության էությունը: Անհրաժեշտություն է առաջանում երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությունն իրականացնել որակապես նոր մակարդակով: Ակնհայտ է, որ այսօր կրթական հաստատություններում սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությանը բավարար ուշադրություն չի դարձվում: Ակնհայտ է նաև, որ խորհրդային ժամանակաշրջանում կուտակված հարուստ փորձը չիկարող իր ամբողջ ծավալով կիրառվել նոր պայմաններում, ինչով էլ պայմանավորվում է ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերով զբաղվող փիլիսոփայական- մանկավարժական ժառանգության վերաիմաստավորման անհրաժեշտությունը, դրա ժամանակակից տեսական հիմքերի մշակումը: Հիմնահարցի փիլիսոփայական,հոգեբանամանկավարժական վերլուծությունը թույլ է տալիս որոշարկել հայրենասիրության՝ որպես սոցիալական երևույթի և անձի բարոյական հատկանիշի էական առանձնահատկությունները:

Աճող սերնդի դաստիարակության գործում հանրակրթական դպրոցն առաջատար դեր է խաղում, ահա թե ինչու մանկավարժական կադրերի պատրաստման և կատարելագործման հարցերը ներկայումս առանձնակի հրատապություն են ձեռք բերում: Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակն ու արդյունքը հայրենասիրության ձևավորումն ու զարգացումն է: Ընդ որում՝ էական է հասարակական փորձի փոխանցումը սերնդին՝ որպես անձնական ձեռքբերում, ինչն արտացոլում է դաստիարակության գործընթացի էությունը՝ արտաքինի, օբյեկտիվի փոխադրումը ներքին, սուբյեկտիվ աշխարհ:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունն իրականացվում է դաստիարակչական աշխատանքի մյուս ուղղությունների հետ միասին: Այն փոխկապակցված է քաղաքացիական դաստիարակության հետ, սակայն, մեր կարծիքով, առավել նպատակահարմար է հայրենասիրական դաստիարակությունը դիտել ոչ թե որպես վերջինիս մաս, այլ որպես դաստիարակչական աշխատանքի ինքնուրույն ուղղություն: Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից, դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ: Սովորաբար աշակերտը դեռահասության և պատանեկան տարիքում իր արարքներում հաճախ հիմնվում է հասարակական կարծիքի և բարոյական պատկերացումների վրա, յուրացնում է դրանք դաստիարակության պրոցեսում, և գալիս է մի պահ, որ արդեն կարող է ինքնուրույն կարգավորել ու վերահսկել իր արարքները, գործողությունները՝ առաջնորդվելով սեփական բարոյական նորմերով, արժեքներով, պարտքի պատասխանատվության գիտակցմամբ, սեփական արժանապատվությամբ ու խղճի թելադրանքով: Հիմնական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները պլանավորելիս պետք է նկատի ունենալ ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները, սերտ կապ ստեղծել պաշտպանական մարզատեխնիկական կազմակերպության խորհրդի,զորամասերի, հիմնարկ-ձեռնարկությունների, վետերանների խորհուրդների և ծնողների հետ[7]: Դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է իրականացվի հետևյալ ուղղություններով՝

Դպրոցականների մեջ զարգացնել հայրենասիրության գաղափարը, գիտակցված պատկերացում տալ հայրենասիրության մասին:

Ծանոթացնել մեր հայրենիքի հերոսական անցյալին, հայ ժողովրդի փառավոր մարտական, աշխատանքային ավանդույթներին (Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի և Սարդարապատի հերոսամարտեր):

Սեր ու հարգանք ներշնչել զինված ուժերի, մարտական ռազմական աշխատանքի նկատմամբ, ճիշտ ըմբռնել զինված ուժերի դերը՝ որպես հայ ազգի և հայ

պետականության միակ երաշխավորի:Հիմնական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները պլանավորելիս պետք է նկատի ունենալ ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները, սերտ կապ ստեղծել պաշտպանական մարզատեխնիկական կազմակերպության խորհրդի, զորամասերի, հիմնարկ-ձեռնարկությունների, վետերանների խորհուրդների և ծնողների հետ:

Որպես արժեք այն բազմաբովանդակ է: Հասկանալով հայրենասիրության էությունն ու բնույթը, ըստ այդմ, կկարողանանք մեկնաբանել ռազմահայրենասիրական դաստիարակության նշանակությունը: Անժխտելի է, որ հայրենասիրությունը հանդիսանում է ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, սոցիալական հանրույթի, անհատի գոյատևման անբաժանելի բաղադրիչը, իսկ հասարակության և պետության դիալեկտիկական գոյատևումն անհնար է պատկերացնել առանց այդ իսկ կառույցների միասնության, ամբողջականության, դինամիկ ու բարեհաջող զարգացման կարևորագույն պայման հայրենասիրության: Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ, հոգևոր ու նյութական մշակույթով, աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով պայմանավորված կյանքի ընթացքով, հայ էթնոսի արիական, աշխարհաստեղծ մենթալիտետով, ազգային ինքնագիտակցությամբ, ի վերուստ տրված հարատևման անհրաժեշտությամբ:

Դպրոց- բանակ կապում կարևորվում է նաև գաղափարախոսական միասնության ապահովումը, ինչին մեծապես նպաստում են փոխադարձ տեղեկատվական, քաղաքական, հասարակական տեսակետների ընդհանուր հաղորդակցության, կրթության ու հայրենիքի պաշտպանության խնդիրների զարգացման միասնական մոտեցումները:

Վաղվա զինվորը կրթվում և դաստիարակվում է դպրոցում, ահա որտեղից է սկսվում բանակը: Նշանակում է, որ այս 2 օղակները պարտավոր են աշխատել համագործակցված: Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը միշտ էլ եղել է դպրոցի ուշադրության կենտրոնում: Դպրոցը միշտ պետք է հետևի իր սաների մոտ ռազմահայրենասիրական գաղափարներ ձևավորելու գործընթացին, սակայն այսօր դա այնքան էլ չի իրականացվում:

Կարևորվում է զինղեկի համագործակցությունը հայոց լեզվի և պատմության ուսուցիչների հետ՝ առավել հիշարժան դարձնելով պատմության կարևորագույն

իրադարձությունները, մեր ազգի հերոսների գործունեությունը, կազմակերպելով այցելություններ պատմական հիշարժան վայրեր, հուշարձանների մոտ՝ ներկայացնելով հերոսների անցած փառավոր ուղին, ծաղիկներ դնելով և իրենց հարգանքի տուրքը մատուցելով: Յուրաքանչյուր աշակերտի պետք է ներշնչել իր կատարած գործի կարևորության ու նշանակալիության մասին համոզմունքը: Հայ զինվորը պետք է հպարտությամբ հիշի, որ ինքն ու իր ընկերները հաջողությամբ են պահպանելու հայրենիքի խաղաղությունն ու անդորրը:

Սովորողների հայրենասիրական դաստիարակություն իրականացնող ապագա ուսուցիչների նախապատրաստման տեսական-մեթոդաբանական հիմքերի մշակման համար ժամանակակից պայմաններում անհրաժեշտ է այնպիսի մոտեցում, որը հաշվի է առնում ժամանակակից մանկավարժության նվաճումները և դաստիարակչական աշխատանքի դիտարկվող ուղղության առանձնահատկությունները: Այդպիսի մոտեցում, մեր կարծիքով, հանդիսանում է ինտեգրատիվ-գործնական մոտեցումը, որ դասվում է մեթոդաբանության կոնկրետ-գիտական մակարդակի շարքում:

Արդի դպրոցին պետք է ջերմություն, հոգի: Նա պիտի լինի հայրենագիտության ամբիոն, տաճար: Սրտի և մտքի կրակով է պետք խոսել հայրենի երկրի մասին՝ հրահրելով հայրենիքի պաշտամունքը երեխաների հոգիներում: Չմոռանան, որ մենք ազատագրել ենք Արցախը, որ մեր պահանջատիրության առաջին քայլն է: Զորավիգ լինեն մեր տառապած, բայց հաղթական հայ ժողովրդին ու հայրենիքին, քանի որ «Հայրենասիրությունը զոհողության աղբյուր է արդեն այն պատճառով, որ վարձատրության չի սպասում, երբ կատարում է պարտքը»:

Երիտասարդ սերնդի ազգային արժեհամակարգի ձևավորման գործում մեծ դեր է խաղում հայրենասիրական և ռազմահայրենասիրական դաստիարակությունը,որով սերմանվում է հայրենիքի հանդեպ սեր և նվիրվածություն, երկրի առաջընթացին սեփական ջանքերով նպաստելու ձգտում:Հայրենասիրությունը ժամանակակից ընկալումը մերօրյա սերնդի մոտ բնութագրվում է տարաբնույթ ձևերով:Եվ այն բացատրվում է հայրենասիրության արտահայտման ձևերի բովանդակությամբ,բազմակողմանիությամբ,արտահայտման ձևերի տարբերությամբ: Դա պայմանավորված է առաջին հերթին Հայաստանի Հանրապետության

ռազմաքաղաքական իրավիճակով, աշխարհագրական դիրքով, հարևան պետությունների հետ ունեցած հարաբերություններով։Ռազմահայրենասիրական դաստիարակությունն այսօր նոր լուծումներ ու մոտեցումներ է պահանջում։Քանի որ պատերազմի ականատես սովորողի մոտ առաջացել ու ձևավորվել են իրարամերժ տարբեր պատկերացումներ։Սովորողների մոտ նկատվում է ազգային արժեքների,մշակույթի,հայրենասիրական գաղափարներ նկատմամբ անտարբերություն։Հետավաբար նախկին մեթոդներն ու հնարներն այսօր չեն հետաքրքրում և անհրաժեշտություն է առաջացած հիմնախնդիրների տալ նոր լուծումներ։Այստեղ նաև կարևոր է թե ինչպիսի սոցիալ-մշակութային քաղաքականություն է վարում պետությունը,ինչպիսին է կրթական համակարգի բովանդակությունը, քանի որ դրանով է պայմանավորված ժամանակակից աշխարհի մարտահրավերներին դիմակայելու հաջողությունը ու ազգային վերածնունդը։[1]

Այսօր շատ կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը,որ մեր հասարակության այդ թվում ժամանակակից ավագ դպրոցի սովորողների տեղեկացվածության աստիճանն բազմաբովանդակ է և հակասական։ ժողովրդավարացման գործընթացները որոշակի դժվարություններ են ստեղծում՝ ըմբռնելու հայրենասիրության էությունը: Անհրաժեշտություն է առաջանում երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությունն իրականացնել որակապես նոր մակարդակով: Ակնհայտ է, որ այսօր կրթական հաստատություններում սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությանը բավարար ուշադրություն չի դարձվում: Ակնհայտ է նաև, որ խորհրդային ժամանակաշրջանում կուտակված հարուստ փորձը չի կարող իր ամբողջ ծավալով կիրառվել նոր պայմաններում, ինչով էլ պայմանավորվում է ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերով զբաղվող փիլիսոփայական- մանկավարժական ժառանգության վերաիմաստավորման անհրաժեշտությունը, դրա ժամանակակից տեսական հիմքերի մշակումը:

Հիմնահարցի փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական վերլուծությունը թույլ

1.Մուրադյան Վ.Ա., Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության կատարելագործման ուղիներն ու միջոցները

է տալիս որոշարկել հայրենասիրության՝ որպես սոցիալական երևույթի և անձի բարոյական հատկանիշի էական առանձնահատկությունները:Հակասություններ կան նաև հայրենասերի և քաղաքացու անձի ձևավորման նկատմամբ:Նշված երևույթների հակացություններով է պայմանավորված հետազոտության հիմնախնդիրը: Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակն ու արդյունքը հայրենասիրության ձևավորումն ու զարգացումն է: Այստեղ էական է հասարակական փորձի փոխանցումը սերնդին՝ որպես անձնական ձեռքբերում: ժամանակակից ավագ դպրոցականի մոտ հայրենասիրություն ու ռազմահայրենասիրություն դաստիարակելն պետք է իրականացնել հաշվի առնելով սովորողների անահատական առանձնահատկությունները:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունն իրականացվում է դաստիարակչական աշխատանքի մյուս ուղղությունների հետ միասին: Այն փոխկապակցված է քաղաքացիական դաստիարակության հետ, սակայն, մեր կարծիքով, առավել նպատակահարմար է հայրենասիրական դաստիարակությունը դիտել ոչ թե որպես վերջինիս մաս, այլ որպես դաստիարակչական աշխատանքի ինքնուրույն ուղղություն: Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից, դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ: Սովորաբար աշակերտը դեռահասության և պատանեկան տարիքում իր արարքներում հաճախ հիմնվում է հասարակական կարծիքի և բարոյական պատկերացումների վրա, յուրացնում է դրանք դաստիարակության պրոցեսում, և գալիս է մի պահ, որ արդեն կարող է ինքնուրույն կարգավորել ու վերահսկել իր արարքները, գործողությունները՝ առաջնորդվելով սեփական բարոյական նորմերով, արժեքներով, պարտքի պատասխանատվության գիտակցմամբ, սեփական արժանապատվությամբ ու խղճի թելադրանքով: Հիմնական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները պլանավորելիս պետք է նկատի ունենալ ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները, սերտ կապ ստեղծել պաշտպանական

մարզատեխնիկական կազմակերպության խորհրդի, զորամասերի, հիմնարկ-ձեռնարկությունների, վետերանների խորհուրդների և ծնողների հետ:

Ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ճիշտ մեթոդների ընտրությամբ,նխատակամղվածությամբ,լավատեսությամբ,համբերությամբ, հոգատարությամբ,մանկավարժահոգեբանական առանձնահատկություններով:

Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնական խնդիրներն են՝

1.Բարձրացնել աշակերտների մարտունակ ու քաջ ոգին:

2.Ձևավորել ու զարգացնել հայրենասիրական բարձր գաղափարներ

3.Յուրաքանչյուր աշակերտի ներշնչել իր կատարած գործի կարևորության ու նշանակալիության մասին համոզմունքը:

4.Ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման գործընթացի կայուն զարգացման ապահովումը, որը պայմանավորված է առաջին հերթին Հայաստանի Հանրապետության առջև ծառացած ժամանակակից մարտահրավերներով:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը ենթադրում է նպատակաուղղված իմացական, բարոյակամային ու ֆիզիկական պատրաստակամություն հայրենիքի պաշտպանության համար, ցանկացած ագրեսորի հակահարված տալու համար, հայրենիքի ռազմատնտեսական հզորության ամրապնդման համար: Հայրենասիրական դաստիարակության նպատակը պետք է դիտարկել ցանկացած ազգի առողջ զարգացման համար այնպիսի մի գործընթացային համակարգի մեջ, ինչպիսին է նրա անդամների ազգային սոցիալականացումը: Հայրենասիրական դաստիարակությունը չպետք է նույնացնել ռազմամոլության հետ, այլ ազգերի հանդեպ ծայրահեղ անհանդուրժողության ձևավորման հետ: Հայրենասիրությունն ու մարդասիրությունը միանգամայն համատեղելի են, միայն մարդասերը կարող է սիրել իր ազգը:

Գլուխ 2. Սովորողների ռազմահայրենասիրական և հայրենասիրական դաստիարակության իրականացման ուղիները

Սովորողների հայրենասիրական դաստիարակություն իրականացնող ապագա ուսուցիչների նախապատրաստման տեսական-մեթոդաբանական հիմքերի մշակման համար ժամանակակից պայմաններում անհրաժեշտ է այնպիսի մոտեցում, որը հաշվի է առնում ժամանակակից մանկավարժության նվաճումները և դաստիարակչական աշխատանքի դիտարկվող ուղղության առանձնահատկությունները: Այդպիսի մոտեցում, մեր կարծիքով, հանդիսանում է ինտեգրատիվ-գործնական մոտեցումը, որ դասվում է մեթոդաբանության կոնկրետ-գիտական մակարդակի շարքում:

Արդի դպրոցին պետք է ջերմություն, հոգի: Նա պիտի լինի հայրենագիտության ամբիոն, տաճար: Սրտի և մտքի կրակով է պետք խոսել հայրենի երկրի մասին՝ հրահրելով հայրենիքի պաշտամունքը երեխաների հոգիներում: Չմոռանան, որ մենք ազատագրել ենք Արցախը, որ մեր պահանջատիրության առաջին քայլն է: Զորավիգ լինեն մեր տառապած, բայց հաղթական հայ ժողովրդին ու հայրենիքին, քանի որ «Հայրենասիրությունը զոհողության աղբյուր է արդեն այն պատճառով, որ վարձատրության չի սպասում, երբ կատարում է պարտքը»:

Դպրոցը նպաստում է աճող սերնդի քաղաքացիական և հայրենասիրական հայացքների,պատկերացումների և զգացմունքների զարգացմանը:Դպրոցը տալիս է կայուն գիտելիքներ, որոնցով դպրոցականները տիրապետում են ժամանակակից գիտությանը և տեխնիկային, նրանց մեջ ձևավորում է գիտական աշխարհայացք, հնարավորություն տալիս հասկանալու բնության եւ հասարակության մեջ տեղի ունեցող երևույթներն ու գործընթացները: Տվյալ առարկայի մասնագիտական գիտելիքներին զուգահեռ յուրաքանչյուր մանկավարժի առաջնահերթ խնդիրն է աշակերտների մեջ դաստիարակել հայրենասիրական զգացմունքներ և համոզմունքներ, նրանց նախաձեռնությունները վերածել կոնկրետ գործերի: Այդ դեպքում ուսումնական և արտադասարանական աշխատանքների ընթացքում երեխաների հոգում ավելի կխորանա հայրենասիրությունը, որը և կորոշի մարդու

ապագա բնավորությունը՝ գիտակցական բարձր ակտիվությամբ մասնակցելու հայրենիքի պաշտպանության գործին:Երիտասարդության վրա մեծ ներգործություն է ունենում թերթերի, ռադիոյի, հեռուստատեսության, ինտերնետային կայքերի, գրականության, թատրոնի ինֆորմացիան:Այդ պատճառով դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները պլանավորելիս պետք է նկատի ունենալ ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները, սերտ կապ ստեղծել պաշտպանական մարզատեխնիկական կազմակերպության խորհրդի, զորամասերի, հիմնարկ-ձեռնարկությունների, վետերանների խորհուրդների եւ ծնողների հետ:

Դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է իրականացվի հետևյալ ուղղություններով՝

1. Դպրոցականների մեջ զարգացնել հայրենասիրության գաղափարը, գիտակցված պատկերացում տալ հայրենասիրության մասին:

2. Ծանոթացնել մեր հարենիքի հերոսական անցյալին, հայ ժողովրդի փառավոր մարտական ուղին (Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի եւ Սարդարապատի հերոսամարտեր):

3. Սեր ու հարգանք ներշնչել զինված ուժերի, մարտական ռազմական աշխատանքի նկատմամբ, ճիշտ ըմբռնել Զինված ուժերի դերը՝ որպես հայ ազգի եւ հայ պետականության միակ երաշխավորի:

4. Դպրոցականների մեջ ձևավորել այնպիսի բարոյահոգեբանական բարձր որակներ, ինչպիսիք են՝ քաջություն, կարգապահություն, պատրաստ լինել սխրագործության, մշտական պատրաստակամություն, հավատ ուժի նկատմամբ:

5. Աշակերտների մեջ դաստիարակել կենդանի հետաքրքրություն ռազմական գործի նկատմամբ, ձգտում ուսումնասիրելու և տիրապետելու ռազմական մասնագիտություններ:

6. Դպրոցականներին ֆիզիկապես կատարելագործել ու կոփել, զարգացնել ուժ, դիմացկունություն, հնարամտություն եւ այլն:

7. Երեխաներին ներգրավել հետեւյալ աշխատանքներում՝ զբաղվել ընթերցանությամբ, քննարկել ռազմագեղարվեստական, արկածային գրականություն,

դիտել և վերլուծել ռազմահայրենասիրական թեմաներով գեղարվեստական ու վավերագրական կինոնկարներ:

8. Ռազմահայրենասիրական դաստիարակությունը պահանջում է նպատակասլացություն եւ հաստատակամություն ամբողջ հասարակայնության եւ հատկապես դպրոցների մանկավարժական կոլեկտիվների ուշադրությունը հրավիրելով այդ գործի վրա :

9.Սովորողներին ոգեշնչելու համար կատարել այցելություն զորամասեր

Դպրոցը պետք է հանդիսանա հայրենասիրության տաճարը և դեռ այնտեղ պետք է հայ պատանին ճանաչի և սիրի հայրենի երկիրն ու ժողովրդին: Դպրոցն է, որ պատանու հոգու մեջ պետք է սերմանի մեր ատմության բովանդակ գեղեցկությունն ու վեհությունը: Երիտասարդների հայրենասիրության գործում կարևոր է նաև համազգային տոների դերակատարությունը: Համազգային տոները ազգային արժեքներ են սերմանում հայ երիտասարդության, ինչպես նաև ողջ հասարակության մեջ: Դպրոցներն այսօր ահռելի անելիքներ ունեն ռազմահայրենասիրական դաստիակարության ուղղությամբ: Եվ այստեղ շատ կարևոր է համագործակցությունն պատմություն, ՀԵՊ, ՆԶՊ, ֆիզկուլտուրա, աշխարհագրության և գրականության առարկաների հետ:

Այսպիսով, աշակերտների ռազմահայրենասիրության ամրապնդման գործում մեծ դեր ունի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացը, ինչի առնչությամբ անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ իրականացնել: Հայրենասիրության դասերը աշակերտի անձի ինքնահաստատման, կայացման, բարոյական արժեքների ձևավորման, պատշաճ վարվեցողության, ռազմական գաղափարադաստիարակչական մտածելակերպի բարձրացման և հետագայում զինված ուժերում ծառայելու նախապայման են հանդիսանում:

Հայրենասիրական աշխատանքը ներառում է հիմնականում ռազմահայրենասիրական թեմաներով միջոցառումներ, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մերօրյա հերոսների, կամավորական ջոկատների հետ և այլն: Արդյունավետ են նաև սպորտային միջոցառումները, մրցակցային խաղերը, իսկ մարտական փառքի վայրերով արշավները ձևավորում են հարգանք ավագ սերնդի նկատմամբ և ամրապնդում նրանց գործի

շարունակականությունը: Կարևորվում է զինղեկի համագործակցությունը հայոց լեզվի և պատմության ուսուցիչների հետ՝ առավել հիշարժան դարձնելով պատմության կարևորագույն իրադարձությունները, մեր ազգի հերոսների գործունեությունը՝ կազմակերպելով այցելություններ պատմական հիշարժան վայրեր, հուշարձանների մոտ՝ ներկայացնելով հերոսների անցած փառավոր ուղին, ծաղիկներ դնելով և իրենց հարգանքի տուրքը մատուցելով:Յուրաքանչյուր աշակերտի պետք է ներշնչել իր կատարած գործի կարևորության ու նշանակալիության մասին համոզմունքը:

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում: Այս հարցն էլ ավելի սուր է ներկայացվում մեր օրերում, քանզի այսօր ակներև է ավանդական հայրենասիրության գիտակցության մակարդակի նվազումը: Այսօր արժեզրկվում են բարոյական մի շարք որակներ: Ժամանակակից գլոբալացման պայմաններում, երբ տեղի են ունենում ոչ միայն մշակույթների ներթափանցում, ինտեգրում, այլև բացասական դրսևորումների ներթափանցում, երբ մեր օրերի հայ իրականությունում զգալիորեն առկա է օտարամոլություն ու հայրենասիրության արժեզրկում կամ նվազում, կարեւոր է դառնում բարոյական արժեքներից հատկապես հայրենասիրության դաստիարակությունը: Իսկ որո՞նք են ուղիները: Դպրոց, ընտանիք, հասարակություն, ավանդույթներ, մամուլ. կարծում ենք, սրանք են հայրենասիրական դաստիարակության իրականացման ուղիները: Հայրենիք ասելով սովորողները պիտի նկատի չունենան այն տարածքը, որ կոչվում է ՀՀ: Հայրենիք ասելով նրանք պիտի հասկանան այն ամենը, ինչը հայինն է՝ մեր պատմությունը, լեզուն ու գրականությունը, Առաքելական եկեղեցին, մշակույթը, մեր ազգային յուրահատկությունները՝ երգը, պարը, ծեսերը, հայի ավանդական կերպարը՝ իր բնորոշ գծերով, սովորույթներով: Պետք էկարողանան պահել մենք-ի ու մեր-ի գաղափարը: Հայրենիքը պետք է լինի երիտասարդների էությունը, մտածելակերպը, ներաշխարհը: Հայրենասիրությունը, մեր կարծիքով, հայրենիքին, ազգին նվիրվելու բարոյականությունն է: Հայրենասիրությունն ազնվություն է, արդարամտություն, աշխատասիրություն, հայրենակցին հարգելու, աջակցելու պատրաստակամություն: Հայրենիքը այն մեծ ուժն է, այն իմաստուն հիմքը, որ միացնելու է նրանց ու հեռավոր

որևէ երկրում ապրող, նույնիսկ հայի անուն-ազգանուն չունեցող, բայց իրեն հայ համարող հայրենակցին:

Հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթական եւ այլ ոլորտներում շատ բարեփո խումներ իրականացվեցին: Տեսադաշտից դուրս չմնաց նաեւ բարոյական դաստիարակությունը, որը անձի ընդհանուր դաստիարակության բաղկացուցիչ մասն է եւ անխզելիորեն կապված է սովորողների գաղափարական, աշխատանքային, ֆիզիկական, գեղագիտական դաստիարակության, ի վերջո՝ աշխարհայացքի ձեւավորման հետ: Բարոյական դաստիարակության նպատակն է աշակերտներին հաղորդել բարոյական սկզբունքի և նորմերի մասին գիտելիքներ, նրանց ներգրավել գործունեության տարբեր ոլորտներում, սոցիալ-բարոյական հարաբերությունների համակարգում, որոնք համապատասխանում են տվյալ ժամանակաշրջանում գործող պահանջներին, կանոններին ու նորմերին:

Ուսումնական գործընթացում հարստանում է երեխայի կենսափորձը, ընդլայնվում է ճանաչողական ոլորտը, զարգանում են զգացմունքները, կամքը և բարոյական կերպարը: Դպրոցում ուսուցիչներն անցկացնում են տարբեր միջոցառումներ հայրենիքի, հավատարմության և նվիրվածության, աշխատանքի, գեղեցիկի, գեղագիտական զգացմունքների և այն ամենի մասին, ինչը ձևավորում է բազմակողմանի զարգացած, ներդաշնակ մարդ-քաղաքացի եւ հայրենասեր:

Եզրակացություն

Դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդրի շուրջ կատարած ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս հանգելու այն եզրակացության ,որ՝

1.Ավագ դպրոցական տարիքի երիտասարդի բազմակողմանի դաստիարակությունը իրենից ներկայացնում է երիտասարդների մտաշարժողականության գործունեության բարձրացմանը: Անհրաժեշտ է որպեսզի դպրոցական տարիների երիտասարդները ունենան մշտապես շարժողական ակտիվություն, որն էլ իր հերթին կնպաստի նրանց մոտ բազմակողմանի զարգացվածության դաստիարակմանը:

2.Յուրաքանչյուր հայ պետք է իր գիտակցության մեջ միշտ բարձր պահի հայրենիքի նկատմաբ սիրո, հավատարմության զգացմունքը: Այդ սերը պետք է փոխանցել սերնդեսերունդ, փայլել այնպես ինչպես մեր նախնիները:

3.Հիմնավորվել է, սովորողների հայրենասիրական դաստիարակության կատարելագործման մանկավարժական ուղիներն ու միջոցները, հայրենասիրական դաստիարակության համակարգի ձեւավորման և զարգացման ծրագրերի իրականացումը:

4.Ժամանակակից ավագ դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետ գործառնությունը հնարավոր է ամբողջական մանկավարժական գործընթացում:

5.Հանրակրթական դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրների արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է հստակեցնել բոլոր սուբյեկտների պարտականություններն ու գործառույթներն այդ ուղղությամբ և մշակել այդ աշխատանքի որակի գնահատման չափանիշներ ու մեխանիզմներ:

Գրականության ցանկ

1.Անդրեասյան Հ.Պ., Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում, - Եր.«Լույս», 1982, 122 էջ:
2.Մուրադյան.Վ.Ա., Ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման հիմնական ուղղությունները հանրակրթական դպրոցում: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր: 2010թ. էջ 403-406:
3.Մուրադյան Վ.Ա., Ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգը հանրակրթական դպրոցում, Հանրակրթական գիտական նստաշրջանի նյութեր, 2011թ, էջ 416-419:
4.https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=77183
5.http://www.hayzinvor.am/33565.html